ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հուլիսի 8-ից-10-ը Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը՝

Գևորգ Պապոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև, 2025 թվականի հուլիսի 8-ից-10-ը

4. Հրավիրող կողմը՝

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ)

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄՍՀԿ) անդամ երկրների Ասամբլեաների 66-րդ շարքի հանդիպումներին:

Մասնակցություն ՄՍՀԿ անդամ երկրների Ասամբլեաների 66-րդ շարքի հանդիպումների շրջանակում կազմակերպված միջազգային ցուցահանդեսի՝ 2025թ. հուլիսի 9-ին կայացած պաշտոնական բացման արարողությանը, Հայաստանի Հանրապետության կողմից ազգային տաղավարով ներկայացված մշակութային ցուցահանդեսին, որը նվիրված է ավանդական գիտելիքներին, արհեստներին և ֆոլկլորին:

6. Քննարկված թեմաները՝

- Մտավոր սեփականության պաշտպանության հետ կապված հարցեր
- Մշակութային ժառանգության դերը մտավոր սեփականության համաշխարհային էկոհամակարգում
- Հայկական գինեգործության ոլորտի զարգացման և միջազգային շուկայում նրա դիրքի ամրապնդմանը վերաբերող հարցեր
- Ստեղծարար արդյունաբերության խթանմանը վերաբերող հարցեր
- Նորարարական նախաձեռնությունների խթանմանը վերաբերող հարցեր

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ասամբլեաների 66-րդ շարքի հանդիպումների շրջանակում ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգը ներկայացրել է ՄՍՀԿ տարեկան հաշվետվությունը և ՄՍՀԿ 2026–2027թթ. աշխատանքային ծրագիրը, որից հետո ՄՍՀԿ անդամ երկրների ներկայացուցիչները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով իրենց երկրներում մտավոր սեփականության ոլորտում կատարված բարեփոխումները:

Այցի շրջանակներում՝ 2025 թվականի հուլիսի 9-ին կայացել է երկկողմ հանդիպում ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Շվեյցարիայի Համադաշնությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանը, ՄՍՀԿ գլխավոր տնօրենի տեղակալը և ՄՍՀԿ այլ ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի և ՄՍՀԿ-ի միջև համագործակցության խորացման ուղիները՝ ընդգծելով հատկապես ստեղծարար արդյունաբերության, մտավոր սեփականության պաշտպանության, նորարարական նախաձեռնությունների խթանման և ՀՀ ազգային մտավոր սեփականության ռազմավարության արդյունավետ իրագործման կարևորությունը:

2025 թվականի հուլիսի 8-ից-17-ը Ժնևում անցկացվող ՄՍՀԿ անդամ երկրների Ասամբլեաների 66-րդ շարքի հանդիպումների շրջանակում Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է առանձին ազգային տաղավարով, որի բացման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2025թ. հուլիսի 9-ին:

Ցուցահանդեսին ՀՀ մասնակցությունը կազմակերպվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցությամբ: Միջոցառման նպատակն է միջազգային հարթակում ներկայացնել և արժևորել Հայաստանի Հանրապետության մշակութային բազմազանությունն ու հարուստ ժառանգությունը՝ շեշտադրելով ավանդական գիտելիքների, արհեստների և ֆոլկլորի նշանակությունը: Ցուցահանդեսի շրջանակներում Հայաստանի ազգային տաղավարն ընդգծում է երկրի մշակութային բազմազանությունը և դարավոր ավանդույթները: Տաղավարն ապահովում է հարթակ՝ միջազգային հանրությանը ներկայացնելու և պահպանելու Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Հայկական կողմի ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցել են Շվեյցարիայի Համադաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը, մի շարք օտարերկրյա դեսպաններ, ՄՍՀԿ անդամ պետությունների պատվիրակներ, ինչպես նաև մշակութային և դիվանագիտական համայնքի այլ ներկայացուցիչներ:

Տաղավարում ներկայացված են հայկական ավանդական արհեստների լավագույն նմուշները՝ գորգագործություն, կավագործություն, մանրանկարչություն, ասեղնագործություն, ինչպես նաև ժողովրդական արվեստի այլ տեսակներ, որոնք ներկայացնում են սերունդների միջև ստեղծագործական ժառանգության պահպանման և փոխանցման կենդանի գործընթացը:

Հայկական տաղավարում առանձնացված ձևով ներկայացված է նաև «Արարատ» ապրանքանիշը՝ որպես մտավոր սեփականության միջոցով միջազգային ճանաչում ձեռք բերած հայկական արտադրանքի օրինակ, ինչպես նաև հայկական գինիների ընտրանի, որը ևս կարող է նպաստել երկրի ներդաշնակ ներկայացմանը: Հայկական տաղավարը կգործի ՄՍՀԿ համաժողովների ամբողջ ընթացքում՝ դառնալով մշակութային երկխոսության, համագործակցության և ազգային ինքնության արժևորման հարթակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգի և ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի միջև կայացած հանդիպման ժամանակ կողմերը վերահաստատել են փոխադարձ հանձնառությունը՝ շարունակելու համագործակցությունը, որը միտված է հայկական ստեղծարար տնտեսության զարգացմանն ու մտավոր սեփականության համաշխարհային համակարգում Հայաստանի դերակատարության ընդլայնմանը, ինչպես նաև մտավոր սեփականության ոլորտում ռազմավարական առաջնահերթությունների, իրավական ու ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործմանը:

Կողմերը երկուստեք հաստատել են նաև «Մտավոր սեփականությունը՝ որպես հայկական գինեգործության կայուն զարգացման շարժիչ ուժ» ծրագրի համատեղ շարունակականական իրագործումը, ինչպես նաև կարևորել են ՀՀ-ում մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոնում մասնագիտական՝ ապագա դասընթացավարների ուսուցման ծրագրերի շարունակելու անհրաժեշտությունը: Հանդիպման վերջում ՀՀ էկոնոմիկայի նախարարը ՄՍՀԿ գլխավոր տնօրենին հրավիրել է այցելել Հայաստանի Հանրապետություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

11.07.2025թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 590-Ա որոշում առ 04.07.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի հուլիսի 8-10-ը**

5. Գործուղման վայրը՝ **Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	-	
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Շվեյցարիա, USD)	158	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	60,745	
	Օրերի քանակը (8, 9, 10 - հուլիս 25թ.)	3	
	Ընդամենը (դրամ)	**182,234**	**182,234**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր /ՊՊՍ սրահ/	5,000	5,000
Ընդամենը ծախսեր (դրամ)		**187,234**	**187,234**
Նախահաշվարկով վճարված (դրամ)		**182,234**	**182,234**
Ընդամենը վճարման ենթակա (դրամ)		**5,000**	**5,000**

***03.07.2025թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD 384.46

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՀ ՆԱՍԻՐՅԱՆ